ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ՝ ՀԱՐՑԱՅԱՐՈՅՑ ԱՆՅԱՅՏՆԵՐՈՎ

Ադրբեջանի ԳԽ «Հայաթ» պաշտօնաթերթի Ապրիլի 26ի համարում զետեղուած է խորհրդարանական թղթակցի ռեպորտաժը Խորհրդային Միութեան ԳԽ Ապրիլի 25ի նիստի մասին: Լրագրողը յիշատակում է նաեւ Միութեան բարձրագոյն օրենսդրական մարմնում Ադրբեջանի պատգամաւորական խմբի մի հարցապնդումը Վալենտին Պալովին: Բողոք յայտնելով Շուշի քաղաքի վերջերս տեղի ունեցած գնդակոծութեան կապակցութեամբ, ադրբեջանցի խորհրդարանականները նրան յղած հարցապնդման մէջ պահանջում են վճռական միջոցներ ձեռնարկել, ինչպէս տեքստում է ասւում, զսպելու հայ գրոհայիններին: Հարցապնդմամբ միաժամանակ պահանջում է, որ Խորհրդային Միութեան ներքին գործերի նախարար Պուգոն յաջորդ օրը, այսինքն Ապրիլի 26ին, ԳԽ նստաշրջանին հաշուետուութիւն տայ այդ ուղղութեամբ իրագործուող միջոցառումների մասին:

Հարցապնդումից յետոյ անցել է բաւականին ժամանակ: Կենտրոնական լրատուական միջոցները, որոնք նման դէպքերում սովորաբար չեն յապաղում հանդէս գալ հակահայկական տեղեկատուութիւններով ու ադրբեջանամէտ մեկնաբանութիւններով, առայժմ, ի ցաւ ադրբեջանական լսարանի, ոչինչ չեն հաղորդել ոչ այդ խորհրդարանական փաստաթղթի առկայութեան, ոչ Պալովի ու Պուգոյի պաշտօնական պատասխանների եւ ոչ էլ, եթէ իրօք եղել են այդպիսիք, նստաշրջանում դրանց շուրջ ծաւալուած մտքերի փոխանակութեան մասին: Սակայն մեզ համար խնդրոյ առարկան, անշուշտ, ոչ այնքան տուեալ պարագայում կամայ թէ ակամայ առաջացած լրատուական պարապն է, որքան որ ադրբեջանական պատգամաւորական խմբի, այսպէս ասած, «խորը եւ նոյնքան միամիտ վրդովմունքի» դրսեւորումը: Բանն այն է, որ պատգամաւորական հարցապնդում անելով, հետաքննութեան համար իսկ առայսօր ոչ մի ճշտուած, հարցայարոյց անյայտներով լեցուն, միջադէպի մասին, դրա մասնակիցների ազգային պատկանելութեան կապակցութեամբ, ադրբեջանական խորհրդարանականները ձեւացնո՞ւմ, թէ իրօք մոռացել են այն անհաշիւ բռնութիւնների, գնդակոծութիւնների, սպանութիւնների, էլ չենք ասում՝ տոհմիկ անասնագողութիւնների մասին, որոնք Ադրբեջանի ՕՄՕՆական ստորաբաժանումները, ադրբեջանական ելուզակային միւս խմբերն ահա երեք տարի շարունակ, նաեւ այս օրերին իրագործում են Արցախի հայ բնակչութեան, մարզի բոլոր բնակավայրերի, թէկուզ հենց Գետաշէն եւ Մարտունաշէն գիւղերի նկատմամբ: Ամենեւին գաղտնիք չէ, որ այս ամենը նրանք կատարում են իրենց ղեկավարութեան կարգադրութեամբ, Կենտրոնի թողտուութեամբ ու աջակցութեամբ, ինչո՞ւ չէ, նաեւ հենց իրենց՝ Միութեան խորհրդարանում կարծես թէ սոսկ յանուն հակահայկական ջլախտ ապահովող ադրբեջանական խորհրդարանականների քաջատեղեակութեամբ ու խրախուսմամբ: